Ս. ԳՐԻԳՈՐ ՀԱՅՈՑ[1]

Ութերորդ դարու կիսուն՝ երբ կոստանդին Կոպրոնիմոս կը տառապեցնէր Արևելքը սրբազան պատկերներու հալածումներով, Ս. Բարսղի կարգի արևելցի շատ կրօնաւորներ և կուսաններ Իտալիա փախան, ի մասնաւորի Նափոլի և Հռոմ. Ասոնց մէջէն քանի մը կուսաններ Հայաստանի Լուսաւորիչ Ս. Գրիգորի ներշխարհներով Նափոլի ապաւինեցան, և ընդունուեցան Ս. Գեննարիոսի հոգաբարձութեան աղթարանը (diaconia), որուն մօտ կանգնեցաւ իրենց նախկին վանքը, որ ցարդ Fondaco di S. Gregorio Ս. Գրիգորի թաղ կ'ըսուի. և որ հետզհետէ այնքան ընդարձակեցաւ, որ այդ կուսանք գրաւեցին Նոստրիանա ըսուած բոլոր հին հողամասը Ս. Գեննարիոսի հոգաբարձութեան պատկանող զանազան տուներով և շէնքերով։ Հարկ է որ հոս դիտել տանք թէ կուսանաց հին վանքերու ձևը նորերու նման չէր. Արևելքի Laureներու ձևն ունէին մենաստանները, մեծ մասը շատ մը տնակներէ կազմուած, որու ամէն մէկուն մէջ միանձնուհի մը կը բնակէր իր աղախիններով. և ամէնքը շրջապատ պարիսպով բոլորուած, մէջը մէկ կամ աւելի եկեղեցիներով, փոքրիկ քաղքի մը կը նմանէին։ Վերջնոյս մէջ հոս հոն ցրուած եկեղեցականներէն՝ բացի հին Ս. Գեննարիոսէ, կը յիշուին Ս. Փրկիչ և Ս. Սեբաստիանոս մատուռները անորոշ ծագումով։ Ութերորդ դարուն մէջ Ստեփանոս Նափոլիի Եպիսկոպոսը և Դուքսը հոս կանգնեց տաճար մը ի պատիւ Ս. Պանտալէոնի՝ կուսաններու վանքով մը։ Կը կարծեն դարձեալ այլք թէ կամ Սերգիոս Ա Դուքսը (835–842) հայր Ս. Աթանասի, և կամ Սերգիոս Դ (1010–1040), Դքսական ընտանիքէ Մարիամ անուն աբբասուհիի մը օրով շինած ըլլայ հոս եկեղեցի մը Հայոց Ս. Գրիգորի, կամ գէթ վերածած ըլլայ մէկ եկեղեցիի Ս. Փրկիչ, Ս. Սեբաստիանոս և Ս. Պանտալէոն մատուռները՝ նուիրելով Ս. Գրիգորի, շատ նուիրատուութիւն ընծայելով վանքին. կ'ուզեն դարձեալ որ նոյն ժամանակ բարեսեղեան կուսանները բենեդիկտեան եղած ըլլան։ Այդ հին եկեղեցին մինչև ԺԶ դար տևեց. հոն 1443ին Փերտինանտ Ա Արագոնացին իր գահուն ժառանգ հռչակեց իր Ալփոնս Բ որդին. 1561ին այդ վանքին մէջ ընդունուեցան Canonichesse ըսուած 70 կուսանք, իրենց մենաստանը փլած ըլլալով, և հոն 11 ամիս բնակեցան, ուսկից ելլելով գընացին հիմնելու Regina Coeli վանքը։ Մինչդեռ վերոյիշեալ ոճով ապրեցան Ս. Գրիգորի կուսանք մինչև ԺԶ դարու կէսը։ Երբ 1563ին Տրիտենդեան ժողովը վերջացաւ, կուսանք վերանորոգման պարտաւորեցան, այսինքն հասարակաց կեանքի, փականքի ևն։ Ալփոնսո Քարաֆա ծիրանաւոր Արքեպիսկոպոսը 1569ին նոյնը ստիպեց նաև Ս. Գրիգորի միանձնուհիներուն, որոնք յեռ քիչ մը դժկամակելով՝ ընդունեցան, և աբբասուհին Ցուլիա Քարաչչիոլը 1570 դեկտեմբեր 27ին առաջին անգամ հանդիսաւոր ուխտ ըրաւ։ Բնակեցան սոյն կուսանք մինչև 1572 Ս. Գեննարիոսի եկեղեցւոյն մօտ գտնուող շէնքին մէջ, և Ս. Գրիգորի թաղը հին վանատան հետքեր կը կրէ. սակայն նոյն տարին հինին հանդէպ այսօրուան վանքը շինեցին Վինչենցո տէլլա Մոնաքի աշխատութեամբ և գլծագրութեամբ, Լուքրեցիա Քարաչչիոլի աբբասուհի եղած ժամանակ։ Ասիկա զարմանալի օրինակ տուաւ, երբ այլ կուսանք չկամութեամբ կը հանդուրժէին որ իրենց

1. Ներկայ յօդուածս կը թարգմանեմ Guida Sacra della città di Napoli գրքէն, (Napoli, Stamperia del Fibreno, 1873. էջ 200–204) յեռ անոր ալէգարդ և գիտուն հեղինակին՝ Gennaro Aspreno Galante քահանայի հետ ծանօթանալու, և իր առաջնորդութեամբ Ս. Լուսաւորչայ եկեղեցին այցելելու և նշխարքները զուրգուրանօք համբուրելու։

digitised by A.R.A.R.@

հին առանձնանոցները քանդեն, անձամբ իրենք քակելուն մէջ։ Նոյն ժամանակները կը ծաղկէր նշանաւոր Ցուլվիա Քարաչչիոլօ որ վանքին ժամանակագրութիւնը գրեց[1], սա իր հօրաքրոջ՝ վերոյիշեալ Լուքրեցիայի հետ միացած՝ 1574ին յետ հին եկեղեցին քակելու, կանգնեց այսօրուանը Յովհան Մկրտիչ Քավայնիի գըծագրութեամբ, և նուիրուեցաւ Հայոց Ս. Գրիգորի և օծուեցաւ Նըրան. Պօղոս տ'Արեցցոյէ՝ Նափոլիի ծիրանաւոր Արքեպիսկոպոսէ։ 1576ին Պայանոի մէջ Ս. Հրեշտակապետ վանքի բարձումով, անոր վեց կուսանքը միացան Ս. Գրիգորի մէջ եղածներուն հետ, հետերնին բերելով Յովհաննու Մըկըրտչի արեան երկու սրուակներէն մին[2]։ Նոյն ԺԶ դարու առաջին կիսուն մէջ գընացին դարձեալ հոն Donnaromita ըսուած քոյրերը, տանելով Ս. Յովհաննու արեան միւս սրուակն ալ։ Հուսկ 1864ին միացան նոյնպէս սրբուհի Փաթրիցիայի կուսանք, տանելով նոյն սրբուհիին մարմինը և արիւնը, Նըրան. Ակլաւի մարմինը, և Քրիստոսի սուրբ բևեռը։

Դիտենք այժմ եկեղեցին՝ առջևի ընդարձակ գաւիթով. մուտքը կը գտնուի Ս. Գրիգորի կիսանդրին, դուռը ընկուզի է Աւետարանչաց, Ս. Ստեփանոսի և Լաւրենտիոսի փորագիր քանդակով։ Մէջը միակ առանով է, զարդարուած ամբողջ ոսկեզօծ կճածեփով և տերևով. ձեղունը նկարուած է Սիլվեստրօ Պրունոյէ, մինչ ոմանք Թէոտորօ Ցիամմինկոյի կը կարծեն. կը տեսնանք Մկրտչի գլխատումը, Ս. Գրիգոր կը վարդապետէ Տըրդատայ. իր տիկինը և արքայական ընտանիքը. Ս. Բենեդիկտոս Փլաչիտօ և Մաւրօ աշակերտներով, և դասին վրայ՝ Վերափոխումը։ Դրան վրայ Ծիորտանոյէ գծուած երեք պատկերները կը ներկայացնեն, առաջինը՝ հայ կուսանաց Նափոլիի ծովեզերքը ժամանելը. կայ հոն Ծիորտանոյի դէմքը այդ մարգով որ կը մատնանշէ ապաստանելու վայրը. երկրորդ՝ Ս. Գրիգորի մարմնոյ փոխադրութիւնը ի Նափոլի, և երրորդ՝ Նափոլիի բնակիչներուն ըրած ընդունելութիւնը՝ կուսանաց։ Նոյնպէս Ծիորտանոյի են խորաններուն կամարներուն վրայ եղած Առաքինութիւնք, և ընդ մէջ պատուհաններու գծուած Ս. Գրիգորի արարք, այսինքն սկսեալ Բեմի կամարէն՝ դիտողին աջակողմէն. ա Ս. Գրիգոր Արտաշատու վիրապէն դուրս կը հանուի. բ հրեշտակիկներ. գ Սուրբին մէկ տեսիլը. դ Տըրդատ թագաւորը խոզակերպ՝ ի պատիժ իր յանցանաց, կ'աղերսէ Ս. Գրիգորը մարդկային կերպարանքն ստանալ նորէն. ե Նոյն թագաւորը Սուրբին մարմինը կը յուղարկէ. զ Գրիգոր կը բուժէ դիւահար Տրդատը. է Եպիսկոպոս կը ձեռնադրուի. ը շարունակելով ձախակողմէն՝ հանդիսաւոր պատարագ կը մատուցանէ. թ կը մկրտէ. ժ անապատի մէջ. ժա եպիսկոպոսութիւնը իր Վրթանէս որդւոյն կը յանձնէ. ժբ կը պատուի և կ'ընդունուի թագաւորէն. ժգ հրեշտակիկներ. ժդ մահ Ս. Գրիգորի ընդ մէջ Վրթանէս որդւոյն և Տրդատ թագաւորին։ Դրան կողմնակի երկու պատկերները՝ Անարատ Յղութեան, և Ս. Յերոնիմոս ու Ֆրանչիսկոս Ս. կուսին հանդէպ՝ Սիլվեստրօ Պրունոյի են։ Մեր աջակողմը գտնուող առաջին խորանն է՝ Աւետման, Փաչիքքօ Ռոզաի. երկրորդը՝ Ս. Կոյսը Ս. Պանտալէոնի և Ս. Անտոնայ հետ, Սառնելլիի է. երրորդը՝ Հայոց Ս. Գրիգորի պատկերը՝ խորանին վրայ, Ֆրանչեսքօ Ֆրաքանցանոյի է, որ իր Ջեզարէ եղբօր հետ գծեց կողմնակի Տըրդատ թագաւորը խոզադէմ աղերսական՝ Սուրբին առջև, և սա Արտաշատու վիրապին մէջ. կամարին մէջ գծուած իր զարհուրելի տանջանքները Մուրայի են

1. Տես Zito, Intorno ad una Cronaca del Monastero di S. Gregorio Armeno, or la prima volta messa a stampa. Nap. 1851.

2. Ս. Յովհ Մկրտչի արեան վրայ տես Zito, Considerazioni sopra il Sangue di S. Giovanni Battista nell'insigne chiesa di S. Gregorio Armeno. Nap. 1858.

digitised by A.R.A.R.@

որ Ֆրաքանցանոյի պատկերը նորոգեց, աւելցնելով երկու հրեշտակներ, որ շատ գովեստի արժանացան իրեն իսկ մրցակից Լուքա Ճիորտանոյէ. չորրորդը՝ Վարդարանի նկարը՝ Նիքոլա Մալինքոնիքոյի է։ Ձախակողմեան խորաններէն՝ առաջինը՝ Ծնունդը՝ Պեռնարտո Լամայի կամ Մարքո Սենացիի է. երկրորդը՝ Խաչելութեանը, Նափոլեթան քանդակ է անկման շրջանի առաջիններէն մէկը. հրեշտակիկները նկարուեցան Սառնելլիէ. Ս. Կուսին և Ս. Յովհաննու արձանները՝ Ֆրանչեսքո Մոլլիքայէ. երրորդը՝ Մկրտչի գլխատումը՝ Սիլվեստրո Պրունոյէ. չորրորդը՝ Ս. Բենեդիկտոսը՝ Ռիպերայէ։ Բեմի խորանը Տիոնիզիո Լացցարիի գծագրութիւն է. վերափոխման պատկերը, և վրայի փոքրիկ նկարը՝ Քրիստոս ի պարտիզի՝ Լամայի են։ Գմբէթին մէջ գծուած Արքայութիւնը, ընդ մէջ պատուհաններու եղած Բենեդիկտեան սրբուհիները, պատուանդաններու մէջ նկարուած՝ Առաքինութիւնք, կամարակալներու կիսալուսնակներու մէջ գտնուած Մովսէսը, Յեսուն, Մելքիսեդեկը և Հուիթը, և բոլոր հրեշտակիկները, և գաւազանով ժայռը զարնող Մովսիսի մեծ նկարը՝ Ճիորտանոյի են, որու են դարձեալ դասին մէջ գծուած Ս. Բենեդիկտոսի վարքը։ Աւանդատան կամարին մէջ եղող Ս. Հաղորդութեան երկրպագութիւնը՝ Մաթթէիսի է։

Շատ ճոխ է եկեղեցիս զգեստներու և սրբազան սպասներու կողմանէ. բայց մեծագոյն յարգը սուրբ Նշխարներու բազմութիւնն է, ի մասնաւորի Սրբուհի Փաթրիցիայի մարմինը, և իր արիւնը որ սովոր է հեղուկ դառնալ օգոստոս 26ին. անոր դայեակ երանուհի Ակլաիի մարմինը, Մկրտչի արիւնը որ նոյնպէս կը հեղկանայ նոյն ամսուն 29ին, Հայոց Ս. Գրիգորի գլուխը, ոլոքներէն մին (միւսը փոխադրուեցաւ ի Կ. Պոլիս 1866ին[1]) և շղթաները, մասունքի կտորները և Սուրբին գաւազանը. գլուխը կրկին գտնուեցաւ իր ամենահին դամբանի մէջ 1788 մայիս 20ին Աննա Ռուֆֆո աբբասուհիէն. մարմնոյն մնացած մասը ցարդ ծածկուած է մերձակայ Ս. Լորենցո եկեղեցւոյն աւագ խորանին ներքև[2]։

Շատ ընդարձակ է վանքը, ամենաճոխ Դիւանով, վայրագաւթին մէջ լուսաստուեր տամկանկարները Ճիաքոմո տէլ Փոյի են. ընդարձակ քառանկեան աղբիւրին քով եղած մարմարեայ արձանները Քրիստոսի և Սամարուհւոյն՝ Մաթթէոս Պոթթիլիէրի են։ Հոն կայ նաև Ս. Մարիա տէլ Իտրիաի խորանը տէ Մաթթէիսի նկարներով, սակայն բուն անունն է Ս. Մարիա տէլ Ոտէճիթրիա, Οδηγητρια, այն է առաջնորդ բարի շաւղի։ Հուսկ կը գտնենք զանգակատան խարսխին մէջ ագուցուած մարմար մը ուր քանդակուած է կողովաբարձ կին մը (canestrifera), մնացորդ մը՝ որ կը համարուի գտնուած աւերակներէն Զէրէրէի մեհեանին, որ երբեմն այս տեղս էր։

Հ. ՔԵՐՈԲԷ ՉՐԱՔԵԱՆ

---

1. Ոլոքներէն միոյն Պոլիս փոխադրուելուն պատմութիւնը ախրութեամբ կատարեց մեզ ազնուատոհմ Աբբասուհին, յայտնելով թէ ո՛րքան մեծ էր իրենց յարգանքը և պաշտօնը առ սուրբ Նշխարս մեր Լուսաւորչին. «Քաղքիս Sforza ծիրանաւորը յատուկ հրամանով մը Պիոս Թ. Ս. Քահանայապետին եկած էր մեզմէ զայն խնդրելու Donna Maddalena Աբբասուհւոյն օրով, (1868ին, և ոչ 1866ին) և մենք չէինք կրնար դիմադրել». «Երբ, աւելցուց, ո՛ր և է նեղութեան մէջ գտնուինք, կը բաւէ եռօրեայ մ'ընել առ Սուրբն Գրիգոր, անմիջապէս կը կատարուի մեր խնդիրքը. Դարձեալ, երբ ուրիշ կուսանաց վանքեր Տէրութենէն գրաւուեցան, Ս. Գրիգոր խնայեց մեզ այդ հալածանքը»։ Ամէն տարի ութօրէիւք կը տօնեն Լուսաւորչայ տօնը, Սեպտ. 30ին։

2. Ս. Գրիգորի նշխարաց մնացած մասին վրայ սոյն տեղեկութիւնը անստոյգ է, ինչպէս որ խոստովանեցաւ հեղինակը՝ մեր հարցման վրայ։

digitised by A.R.A.R.@